

Առաջարկ

2012-2014 թթ չհ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի կրթության և գիտության նախարարության հայտում «Փորձարարական մանկավարժական ծրագրերի իրականացում հանրակրթությունում» ծրագիրն ընդգրկելու (շարունակելու) և «Երևանի «Մխիթար Մեբաստացի» կրթահամալիր» ՊՈԱԿ-ին այդ նպատակով դրամական միջոցներ (լրացուցիչ ֆինանսավորում) հատկացնելու

Իրավական հիմքերը

ՀՀ կառավարության 2010թվականի հուլիսի 8-ի N859-Ն որոշմամբ 2011-2013թթ պետական միջնաժամկետ ծախսերի (այսուհետ՝ ՄԺԾ) ծրագրում, որպես հանրակրթության օժանդակության ծառայություններ, ընդգրկված է «Փորձարարական մանկավարժական ծրագրերի իրականացում հանրակրթությունում» ծրագիրը, որի իրականացման համար նախատեսված են պետական դրամական հատկացումներ «ՀՀ ԿԳՆ Երևանի «Մխիթար Մեբաստացի» կրթահամալիր ՊՈԱԿ»-ին (այսուհետ՝ կրթահամալիր)՝ 2011թ. 94 մլն 937,2 հազար դրամ, 2012-ին՝ 94 մլն 937,2 հազար դրամ, 2013-ին՝ 100 մլն 879,1 հազար դրամ: ՄԺԾ ծրագրում արձանագրված են ծրագրի ոչ ֆինանսական և ֆինանսական ցուցանիշները: 2011թ. ՀՀ պետական բյուջեով «Փորձարարական մանկավարժական ծրագրերի իրականացում հանրակրթությունում» ծրագրի իրականացման համար կրթահամալիրին հատկացված է 94 մլն 937,2 հազար դրամ. 03.02.11թ. կրթահամալիրը սահմանված կարգով ԿԳ նախարարության հետ կնքել է պետական աջակցության Ա-6/19-11 պայմանագիրը, որով որոշված է ծրագրի 2011թ. աշխատանքի բովանդակությունը: Կրթության զարգացման 2011-2015թթ պետական ծրագրով նախատեսվում է մեդիայի առավել գործածում՝ սկսած կրտսեր դասարաններից: 2011-2013թթ ՄԺԾ ծրագրի իրագործման համար կրթահամալիրը գործընկերային հարաբերություններ է հաստատել միջազգային և հայաստանյան բիզնես, կրթական և բարեգործական կազմակերպությունների հետ, որոնց հետ կնքվել են հեռանկարային համագործակցության պայմանագրեր, համաձայնագրեր, որոնց թվարկումը կա ստորև: 2012-2014թթ ՄԺԾ ծրագրի իրավական մյուս հիմքերը բերված են ՄԺԾ 2011-2013թթ ծրագրում:

Իրավիճակի նկարագրությունը

2010թ. «Մխիթար Մեբաստացի» կրթահամալիրը «Հանրակրթական ծրագրերի իրականացման օժանդակության» շրջանակներում 94.360 մլն. դրամ պետական աջակցություն է ստացել «Փորձարարական մանկավարժական ծրագրերի իրականացում հանրակրթությունում» ծրագրի իրականացման համար, որի հաշվետվությունը սահմանված կարգով ներկայացվել է ԿԳ նախարարություն: 2010թ. ՀՀ պետական բյուջեով որոշված ֆինանսական ցուցանիշները՝ կատարված, իսկ ոչ ֆինանսականները նաև գերազանցված են:

2010թ. ծրագրի իրականացման ցուցանիշներ

- Ծրագրի փորձարկման և վերապատրաստման նախակրթարանային 2-5 տարեկանների խմբերի պահպանում կրթահամալիրի կրտսեր դպրոցների կազմում ծրագրի միջոցներով - 8 խումբ, 170 սան, և 5-6 տարեկանների պատեզից դպրոց անցման գիտափորձի խմբերի պահպանում ուսուցողական ծրագրերի պետական ֆինանսավորմամբ - 3 խումբ, 68 սովորող
- Հանրապետության նախադպրոցական հաստատությունների մանկավարժական և այլ աշխատողների վերապատրաստում - 11 խումբ, 244 մարդ
- Հանրակրթական դպրոցների ղեկավարների, ուսուցիչների ՏՀՏ հմտությունների զարգացում «Էլեկտրոնային գրատախտակը և համացանցը հանրակրթական դասարանում» ծրագրով՝ 100, «Live@Edu համակարգը հանրակրթական դպրոցում» ծրագրով՝ 42 մարդ

- Թարգմանված և հրապարակված - Ֆրենկ «Մանկավարժական ինվարիանտներ» (շարունակություն), Մոնտեսորիի «Մանկան տուն» (շարունակություն), Հեգելի «Գիմնագիայի տնօրենի ճառերը» (շարունակություն), Դ. Սոկոլով «Հեքիաթներ և հեքիաթաբերապիա» (շարունակություն), Վ. Լևի «Ինչպես դաստիարակել ծնողներին» (շարունակություն), Մարկոս Էլիոս Ավրելիոս Վերոս «Ինքս ինձ հետ մենակ», Պաոլո Ֆրերե «Ճնշվածների մանկավարժություն», Պաոլո Կոելիո «Գետի նման», «Լույսի զինվոր», Ա. Խինչին «Մաթեմատիկայի դասերի դաստիարակչական ազդեցության մասին», պատմվածքներ, այլ հեքիաթներ (ավելի քան 10)
- Մեթոդական մշակումներ և այլ երկրների մանկավարժական փորձը ներկայացնող հոդվածներ - ավելի քան 10, հրապարակված գրքեր և ուղեցույցներ – 6 անուն, կրթահամալիրի աշխատողների հրապարակված մեթոդական մշակումներ և ուսումնական նյութեր - ավելի քան 100, «Դպիր» էլեկտրոնային ամսագրի ավելի քան 180 էլեկտրոնային էջ
- Հանրապետական ԶԼՄ-ներում կրթահամալիրի մասին հրապարակումներ և կրթահամալիրի աշխատողների հոդվածներ, հարցազրույցներ – ավելի քան 50
- 2010թ. ստեղծված մեդիանյութերը - ավելի քան 2000 նյութ, հրապարակված CD, DVD-ներ – ավելի քան 20 անուն, կայքի մոտ 8000 էջ
- Ուսումնական-հայրենագիտական բազմօրյա արշավներ – 25, ուսումնական ճամփորդություններ – ավելի քան 200, հանրապետական հավաքներին և ստուգատեսներին մասնակցած մեծահասակներ – 600 մարդ (4 հավաք), սովորողներ – 4000 (3 ստուգատես)
- 2010թ. ձեռքբերված էլեկտրոնային գրատախտակներ և կից սարքեր – 20, էլեկտրոնային գրիչներ – 2 հավաքածու
- Ոչ բյուջետային ներդրումներ հեղինակային մանկավարժության զարգացման համար – 193 մլն դրամ

2010թ. ընթացքում հանրապետությունում զգալի ավելացել է համակարգիչներով, ինտերնետ կապով ապահովված և էլեկտրոնային գրատախտակներ ունեցող դպրոցների քանակը: ՀՀ 2011 թ. պետական բյուջեով ԿԳ նախարարությանը ավագ դպրոցների ցանցի ներդրման համար հատկացվել է 99,750 մլն դրամ, ԿՏԱԿ-ին՝ 858,009 մլն. դրամ հանրակրթական դպրոցների ինտերնետային ցանցի սպասարկման և համակազմային սարքավորումների պահպանման համար: 2010թ. վերջում կառավարությունը, բացի նշվածից, լրացուցիչ զգալի միջոցներ հատկացրեց դպրոցները համարկազմիչներով համալրելու համար: 2011թ. ընթացքում հանրապետության բոլոր դպրոցները միացված կլինեն համացանցին: ՀՀ կառավարության մասնակցությամբ Հայաստանում իրականացվող վարկային ծրագրերի շնորհիվ անհատական համակարգիչ (նոթբուք) կունենան զգալի թվով ուսուցիչներ, սովորողներ (ընտանիքներ), ինտերնետը կդառնա ավելի հասանելի և արագագործ: Հանրակրթության մասին ՀՀ օրենքում 2010թ. դեկտեմբերին արված փոփոխությունները ստեղծեցին օրենսդրական նոր հնարավորություններ հանրապետությունում այլընտրանքային, այդ թվում՝ հեղինակային մանկավարժության, մանկավարժական փորձարարության և նորարարության խթանման և տարածման, դրանց ցանցի ստեղծման համար: Կրթահամալիրում սկսվել են կրթահամալիրի 2013-2018թթ զարգացման ծրագրի և կրթահամալիրի կանոնադրության փոփոխությունների մշակման աշխատանքները, որոնք թելադրած են նաև ՄԺԾ ծրագրերի իրագործման արդյունքներով և փորձով: 2010թ. նախատեսված մանկավարժական հավաքների կազմակերպումը ցույց տվեց, որ մասնակիցների մեծ թիվը և աշխարհագրությունը պայմանավորված են նաև մեդիայի կիրառմամբ: 2011թ. հանրակրթական Դիջիտալ Ժամանակ սոցիալական ցանցերում տեղադրվեցին 700-ից ավելի աշխատանքներ: Սովորողների 2011թ. զարնանային օլիմպիադային, շնորհիվ մեդիայի և բազմալեզվության, հնարավոր է դառնում ցանկացած սովորողի, ուսուցչի, դպրոցի մասնակցություն՝ անկախ բնակավայրից, երկրից, հեռավորությունից: 2010թ. նոյեմբերից կազմակերպվել է «Բնթելի» «Անհատական համակարգիչ-դասընկեր» ծրագրի պիլոտային մեկ դասարանի (2-րդ դասարան) գործունեությունը: Կրթահամալիրի, դասարանի սովորողների ծնողների և «Յունիքումփ» ֆիրմայի ջանքերով դեկտեմբերին ձևավորվել է նոթբուքերով և ս մեկ (8-րդ) դասարան: Դասարանում

սովորողների և ուսուցչի անհատական համակարգիչների մշտական առկայությունը հիմնովին փոխում է ուսուցման կազմակերպումը: 2011թ. կրթահամալիրը սկսեց «Կա մեդիա, կա կրթություն, չկա մեդիա՝ չկա կրթություն» ծրագրային դրույթով, որով արձանագրվում է սկզբունքորեն նոր իրավիճակ: Ահա ինչու, կրթահամալիրի խորհրդի որոշմամբ 2011-2012 ուսումնական տարում կրթահամալիրի նոր ձևավորվող դասարանները՝ 1-ին, 7-րդ և 10-րդ, կլինեն մեդիակրթության ծրագրերով դասարաններ: Ծրագրում ընդգրկված դասավանդողների աշխատանքը դառնում է սկզբունքորեն անընդհատ, նրանք հանդես են գալիս որպես մեդիակրթության ծրագրերի և ուսումնական նյութերի հեղինակներ: Սրանով այլ է ուսուցչի պատասխանատվությունը և աշխատանքի ծավալը: Դասարանները ծնողների միջոցներով կունենան էլեկտրոնային գրատախտակներ և համացանց, բոլոր սովորողների և ուսուցիչների համար պարտադիր կլինի նոթբուք ունենալը: Սա նաև ծնողին է պարտադրում գործնականում տիրապետել մեդիային. մեդիակրթության ամբողջական ներդրման արդյունքում սովորողը և ուսուցիչը դառնում են նաև ծնողի ուսուցիչը: Ակնհայտ է նաև ծնողների մեդիահամայնությունների զարգացումը, որն արտահայտվում է նաև կայքի շահառուների թվի կայուն աճով:

Հեղինակային մանկավարժության ծրագիրն իրագործող սովորողների և ուսուցիչների մեդիա և այլ տեխնոլոգիական և օտար լեզուների հմտությունների (կարողությունների) զարգացման, դրա տեխնիկական կազմակերպման համար կրթահամալիրը համատեղ ծրագրեր է նախաձեռնել և իրականացնում գործընկերների՝ «Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի», «Մայքրոսոֆթի», «Ֆիրմա Ալֆա»-ի, «Յունիքոմփի», Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության, «Նեյշնրլ ինստրումենտ քորփորեյշն»-ի, Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարանի, Էլեկտրոնային բովանդակության ասոցիացիայի, Հայաստանի ամերիկյան համալսարանի թվանշային գրադարանի հետ: Հանրակրթական Դիջիտալ 2011-ի հանդիսավոր բացման ժամանակ կնքվել է համագործակցության հուշագիր կրթահամալիրի, «Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի», «Յունիքոմփի»-ի, «Ֆիրմա Ալֆա»-ի և Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության միջև: Կրթահամալիրը գործընկերային հարաբերությունների մեջ է ՏՏ միջազգային կազմակերպությունների հետ. 2010թ. կրթահամալիրը SMART Technologies –ի կողմից ընտրվել է որպես «SMART օրինակելի դպրոց», Intel-ի հետ իրականացնում է «Classmeat – PC» ծրագիրը, Mitsubishi Electronics և SMART Technologies կազմակերպությունները Հանրակրթական Դիջիտալ-ի պաշտոնական բացման ժամանակ գնահատեցին կրթահամալիրի ջանքերը ՏՀՏ-ների ներդրման ուղղությամբ: Կրթահամալիրի հետ համագործակցում և ծրագրի իրականացմանն աջակցում են հասարակական կազմակերպություններ («Վորլդ Վիժն Հայաստան», «Հասարակական երկխոսության և զարգացումների կենտրոն», ԱՄՆ «Հայաստանի զարգացման ծառայություններ», «Գազիկ Ծառուկյան» հիմնադրամի «Հեռանկար» ծրագիր, «Ալեքսանյանների ընտանիք», «Փյունիկ» բարեգործական հիմնադրամներ և այլ):

Ուսուցիչների, սովորողների մեդիա, թարգմանական, ստեղծական կարողությունների ընդարձակման արդյունքում նկատելի ավելացել են նրանց միջոցով համացանցում տեղադրվող հայալեզու ռեսուրսները: Սոցիալական ցանցերում ճանաչված լինելը խթան է դառնում այդպիսի գործունեության համար, և շատ սովորողների համար ընտանիքի սոցիալական վիճակի լավացման գործուն միջոց է դառնում: Վիքիփեդիայի հայկական խմբագրության և կրթահամալիրի միջև սկսված համագործակցության ընդարձակումը ծրագրի ինքնուրույն խնդիր է դառնում՝ պահանջելով լրացուցիչ ֆինանսավորում: Ստեղծականության և տեխնոլոգիական կարողությունների զարգացումը բերում է նրան, որ ուսումնական արդյունքում ստեղծվում ծառայություններ, ապրանքներ, կատարվում է աշխատանք, որի իրական գնորդը դառնում է պետական պատվերով իրականացվող փորձարարական մանկավարժության ծրագիրը:

Մեր փորձը ցույց տվեց, որ օտար լեզուների ուսուցումը իրականում դառնում է արդյունավետ, երբ այլ առարկաների դասավանդման ժամանակ գործնականում կիրառվում են օտար լեզուները, երբ ուսուցիչն ու սովորողները օտար լեզվով կարողում են անհրաժեշտ գրականություն, թարգմանում են: Ուսուցչից դա լրացուցիչ ջանքեր, նոր գիտելիք և հմտություններ է պահանջում, սակայն արդյունքը

շահեկանորեն տարբերվում է: Այդ աշխատանքը անելու խթանը գնահատումն ու լրացուցիչ վարձատրությունն են:

Հայաստանյան աշխատանքի շուկան դառնում է կրթահամալիրի հեղինակային կրթական ծրագրի իրական պատվիրատուն: Հայաստանյան կազմակերպությունները մասնակցում են ոչ միայն ուսումնական պլանների, ծրագրերի կազմմանը, այլև դրանց իրագործմանը. 2011թ հունվարից կրթահամալիրի 10-11-րդ դասարանցիները ուսումնական պլանով նախատեսված փորձառություն են անցնում Երևանյան ֆիրմաներում («Ֆիրմա Ալֆա», «Յունիքոմֆ», հյուրանոցա-ռեստորանային համալիրներ, գեղեցկության սրահներ, «Շողակաթ» TV և այլն):

Կրթահամալիրի միջազգային կապերի ընդարձակումը, կրթական փոխանակումների 2010թ. ծավալը, կայքից, հատկապես գրադարանի և «Դայրի» էջերից օգտվող արտասահմանյան շահառուների քանակի և աշխարհագրության մեծացումը անհնար են դարձնում դրանց սպասարկումը միայն օտար լեզվի ուսուցիչների մասնագիտական նեղ խմբերով, պահանջվում են հեղինակային մանկավարժության բազմալեզու ներկայացում, բոլոր ուսուցիչների՝ օտար լեզուների գործնական տիրապետում:

Հեղինակային մանկավարժության գնահատման զարգացման արդյունք են 2010-2011 ուսումնական տարվա առաջին կիսամյակի՝ դպրոցների, ուսուցիչների, խմբերի և անհատ սովորողների կիսամյակային էլեկտրոնային հաշվետվությունները, որոնք հրապարակված են կայքում: Կրտսեր դպրոցում ցուցանիշային-բնութագրական, միջին դպրոցում ցուցանիշային-ստուգարքային գնահատման համակարգի զարգացումով ավագ դպրոցում ձևավորվում է գնահատման կրեդիտային համակարգը:

ՄԺԾ ողջ ընթացքում նկատելի է կապը պետական հատկացումների և ոչ բյուջետային ներդրումների միջև: 2010թ. արդեն ոչ բյուջետային միջոցների ծավալը նկատելիորեն գերազանցել է պետական հատկացումը: Պետական աջակցությունը կրթահամալիրում իրականացվող հեղինակային մանկավարժության ծրագրին շարունակում է պայմանավորել ծրագրի իրագործման նկատմամբ հասարակության վստահությունը, ապահովում ոչ բյուջետային ներդրումների հոսքը կրթության զարգացման գործում: Կրթահամալիրը սովորողներին չի ընտրում, ընդունելության համար ստուգումներ չի կազմակերպում, այլ սովորողներն են (ընտանիքները) ընտրում ծրագիրը, և տարեցտարի կայուն աճում է հեղինակային մանկավարժությունն ընտրող, դրա պատվիրատու սովորողների (ընտանիքների) թիվը:

3. Ծրագրի գերակայությունները, նպատակները և խնդիրները 2012-2014թթ ՄԺԾ առաջարկի նպատակները, խնդիրները և գերակայությունները 2011-2013թթ ՄԺԾ առաջարկի, 2011թ. «Փորձարարական մանկավարժության ծրագրերի իրականացում հանրակրթությունում» ծրագրի շարունակությունն են ու հետևողական զարգացումը: Ահա ինչու, 2011թ. պետական բյուջեով նախատեսված «Փորձարարական մանկավարժական ծրագրերի իրականացում հանրակրթությունում» ծրագրի ծախսային ուղղությունները, որոնք ստորև ներկայացված են, 2012-2014թթ կպահպանվեն: Վերը նկարագրված իրավիճակով թելադրված՝ ծրագրում կան աշխատանքի նոր ուղղություններ, որոնք ընդարձակում են ծրագիրը և պահանջում նոր ֆինանսական հատկացումներ: 2011-2013 ՄԺԾ ծրագրով նախատեսված, 2011թ. ծրագրով իրականացվող ծառայությունները (կրթահամալիրի մանկավարժության կենտրոնի, գրադարանի, մեդիահրատարակչատան, մեդիատպագրության պահպանություն, ծրագրի նախադպրոցական խմբերի պահպանում, կրթահամալիրի ուսուցիչների մասնագիտական վերապատրաստում, առարկայական բաց օլիմպիադաների, տեխնոլոգիական ստուգատեսների, սովորողների հեռավար ուսուցման, ամենամյա հանրակրթական Դիջիտալի, մեդիափառատոնի, տարատարիք սովորողների ուսումնահետազոտական ճամբարների կազմակերպում, ուսումնահայրենագիտական ճամփորդություններ, արշավախմբային գործունեություն, գործընկեր դպրոցների հայաստանյան ցանցի դպրոցների համար ուսումնական փաթեթի ստեղծում և ուսուցիչների, հանրապետության նախադպրոցական հաստատությունների աշխատողների վերապատրաստում, «Ռեբրտիքս» ծրագրի իրականացում) կպահպանվեն, և դրանց նկատելի աճը կապահովվի կրթահամալիրի ոչ բյուջետային միջոցների հաշվին:

2011թ. ծրագրային ծախսեր
Դրամական մուտք տարեկան 94,937.200 դրամ

հազար դրամներով

Ծախսային ուղղություն	տարեկան ծախս
Ծրագրի սպասարկման, ուսուցողական միջավայրի բարելավման ծրախսեր	9500,000
Կրթահամալիրի մանկավարժության կենտրոնի, գրադարանի, մեդիահրատարակչատան, մեդիատպագրության պահպանություն	19872,000
Ծրագրի նախադպրոցական խմբերի պահպանման ծախսեր	19152,000
Մանկավարժական էլեկտրոնային «Դպիր» և «Ուարտեզ» պարբերականների հրատարակում	3072,000
Ուսումնական կայքի (այդ թվում՝ ինտերնետային TV, ինտերնետ ռադիո, թարգմանչական լրատվական գործակալություն, Վիքիպեդիայի խմբագրություն) պահպանություն	3888,000
Կրթահամալիրի ուսուցիչների՝ Ծրագրով նախատեսված մասնագիտական վերապատրաստում	2308,000
Ուսումնական մեդիանյութերի ստեղծում և հրատարակում	3450,000
Ուսումնական էլեկտրոնային գրադարան	4320,000
Ուսումնաարտադրական արհեստանոցների ստեղծում և դրանցում սովորողների ուսուցման կազմակերպում	2592,000
«Անհատական համակարգիչ-դասընկեր», «Էլեկտրոնային գրատախտակը և էլեկտրոնային գրիչները հանրակրթական դասարանում», «Ռոբոտիքս» ծրագրերի իրականացում	2340,000
Օտար լեզուներ (այդ թվում՝ վրացերեն, արաբերեն, պարսկերեն, թուրքերեն) կիրառելու հմտությունների զարգացում	2592,000
Կրթահամալիրի, դպրոցի, դասարանի, խմբի, սովորողի ուսումնական գործունեության գնահատման էլեկտրոնային համակարգի ամբողջացում	1500,000
Սովորողների և դասավանդողների փոխանակման ծրագրեր, պարբերական օնլայն քննարկումներ, հետազոտող ուսուցիչների ամենամյա բաց հավաքներ	3450,000

Առարկայական բաց օլիմպիադաներ, տեխնոլոգիական ստուգատեսներ, սովորողների հեռավար ուսուցում, ամենամյա հանրակրթական Դիջիտեքի, մեդիափառատոնի կազմակերպում	5600,000
Տարատարիք սովորողների ուսումնահետազոտական ճամբարների կազմակերպում	6100,000
Ուսումնահայրենագիտական ճամփորդություններ, արշավախմբային գործունեություն	2394,000
Գործընկեր դպրոցների հայաստանյան ցանցի, այդ դպրոցների համար ուսումնական փաթեթի ստեղծում և ուսուցիչների վերապատրաստում	1928,000
Հանրապետության նախադպրոցական հաստատությունների աշխատողների վերապատրաստում	2380,000

2012, 2013, 2014 թթ լրացուցիչ ծախսերի հիմնավորում հազար դրամներով

	2012		2013		2014	
	քանակ	անհրաժեշտ գումար	քանակ	անհրաժեշտ գումար	քանակ	անհրաժեշտ գումար
Մեդիակրթության ծրագրերի և ձեռնարկների ստեղծում	10	10000	10+10	13000	10+10	13000
«Անհատական համակարգիչ-դասընկեր» ծրագրի դասարաններ	20	5520	50	13800	100	27600
Ավագ դպրոցում մասնագիտական փորձառության կազմակերպում	400	2970	450	3022,5	500	3075
Ավագ դպրոցում կրեդիտային համակարգի փորձարկում և ներդրում	3	3825	3	3825	3	3825
Վիքիփեդիայի հայալեզու հոդվածների ստեղծում	50	125	100	250	150	375
Հեղինակային մանկավարժության նյութերի թարգմանություն օտար լեզուներով	20	50	40	100	60	150
Մեդիակրթության համար անհրաժեշտ ձեռնարկների թվայնացում	100	1500	100	1500	100	1500
Ուսումնա-արտադրական արհեստանոցների ընդարձակում	4	5100	5	6375	6	7650
Օտար լեզուներ կիրառելու հմտությունների զարգացում	20	5520	30	8280	50	13800
Ընդամենը		34610.0		50152.5		70972.5

1. 2012թ. տարում 10 նոր ծրագիր՝ իր ձեռնարկով (յուրաքանչյուրի համար՝ 1000000 դրամ), 2013-ին՝ 10 նոր ծրագիր և 10 ձեռնարկ և նախորդ տարվա ծրագրերի ձեռնարկների լրամշակում (յուրաքանչյուրը՝ 300000 դրամ):
2. «Անհատական համակարգիչ-դասընկեր» ծրագրում աշխատող ուսուցիչների լրավճար ամսական 20000 դրամ, 2012թ.՝ 20, 2013թ.՝ 50, 2014թ.՝ 100 ուսուցիչ:
3. Մասնագիտական փորձառությանը կմասնակցեն 2012թ. կրթահամալիրի 11-12-րդ դասարանի 400 սովորող, 2013 թվական՝ 450, 2014թ.՝ 500: Փորձառությունը կկազմակերպվի 6 հոգիանոց խմբերով, 7-օրյա մոդուլով (66 խումբ * 7 օր): Փորձառության կազմակերպման ծախսը - մասնագետների աշխատավարձ (90000 դրամ աշխատավարձով 2 հաստիք – տարեկան 2550000 դրամ) և

ճանապարհաճախ (յուրաքանչյուրին՝ օրական 300 դրամ, որի կեսը կվճարի ծնողը, կեսը ծրագիրը – տարեկան 2012թ.՝ 420000, 2013թ.՝ 472500, 2014թ.՝ 525000 դրամ):

4. Կրթահամալիրի 3 ավագ դպրոցներում 1-ական մասնագետ (90000 դրամ աշխատավարձով 3 հաստիք – տարեկան 3825000 դրամ)
5. Վիքիփեդիայի հոդվածների համար տարբեր առարկաների ուսուցիչների հոնորար, 1 էջը՝ 2500 դրամ. 2012-ին՝ 50 էջ, 2013-ին՝ 100, 2014-ին՝ 150:
6. Օտար լեզուներով թարգմանության հոնորար, մեկ էջը՝ 2500 դրամ. 2012-ին՝ 20 էջ, 2013-ին՝ 25, 2014-ին՝ 30:
7. 1 գրքի թվայնացման աշխատավարձ՝ 15000 դրամ, յուրաքանչյուր տարում թվայնացվելու է 100 գիրք:
8. Ուսումնասիրտադրական արհեստանոցի ղեկավարի աշխատավարձ ամսական 90000 դրամ, 2012-ին՝ 4 հաստիք, 2013-ին՝ 5 հաստիք, 2014-ին՝ 6 հաստիք:
9. Օտար լեզուները (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իսպաներեն, իտալերեն, թուրքերեն, արաբերեն) ուսուցման մեջ կիրառող ուսուցչի լրավճար ամսական 20000 դրամ, 2012-ին՝ 20 ուսուցիչ, 2013-ին՝ 30, 2014-ին՝ 50:

2012-2014թթ ծախսերի ամփոփ աղյուսակ
հազար դրամներով

	2012	2012	2013
Ընդամենը	129547,2	145089,7	171854,1

Կրթահամալիրի տնօրեն՝

Ա. Բլեյան